

—≡ Ս Ի Ո Ն ≡—

Լ.Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1961

◀ Սեպտեմբեր ▶

Թիւ 9

Կ Ո Ն Դ Ա Կ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԵՆ
ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ-ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԳԵԱՆ 1600 ԱՄԵԱԿԻՆ ԱՌՅԻՒ

Վ Ա Ջ Գ Է Ն Ծ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս ՈՒ Ս Ի Գ Ր Ի Ս Տ Ո Ս Ի
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԵՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՓԻՆ ԱՋԳԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍՏՈՊԵՅ ԵՒ ԿԱՓՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԾԱՅՐԱՊԵՏԵՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՄԱՋԳՈՎԱՆ ՆԱԽԱՄԵՄԱՐ
ԱՓՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱՇՆԻ

ԳՐԻՍՏՈՍԱԽԱՆՎ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՏԵՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿՈՑ
ԿԱՓՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ, ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ԹՈՒՐ-
ԳԻՈՑ ՀԱՅՈՑ, ԱՐԲԵՊԻՍԿՈՍՏՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ԳԱՀԱՆԱՅՈՑ ԵՒ ՍԱՐԿԱ-
ԻԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ
ՊԱՇՏՕՆԷՒՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԻԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԻԵԱՆ ՀԱՅՈՑ.

ԱՍՏՈՒԱՄ, երանելի օր մը, այցի ելաւ Իր հաւատացեալ հօտին ի Հա-
յաստան աշխարհ, և Հացեկաց զիւղակին մէջ Իր արարչազօրծ Այնով բացաւ աշ-
քերը հայ մանուկի մը, «ելից զնա սատուածեղէն հողով իմաստութեան» (Ելք,
ԼԵ. 32), և կոչեց զայն մեծ առաքելութեան մը:

Այդ պատահեցաւ փրկչական 361 թուականին:

Աստուածընտիր մանուկը հրաշալի կերպով աճեցաւ և անյադ ծարաւով
ըմպեց երկնային շնորհներու բաժակէն, զօրացաւ, հանճարացաւ, ամբողջ կեանք
մը աքնեցաւ և իր մեծ առաքելութիւնը ի կատար ածեց՝ փառքով:

Մեսրոպ վարդապետ Մաշտոց գտաւ և բերեց զի վերածեց հայ ժողովուրդի
խօսած լեզուի հնչիւնները, յօրինեց անոնց նշանագրերը և Սահակ Պարթև Հայ-
րապետի հետ թարգմանեց Սուրբ Գիրքը: Եւ մեծ վարդապետը իր լոյս ձեռքով
զրեց առաջին հայերէն տառերը՝ «ձանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ
զբանս համնարոյ» (Առակք, Ա. 2), Սուրբ Էջմիածնի կամարներուն տակ:

Մերոպ վարդապետ հիմը դրաւ հայ դպրութեան և գրականութեան:

Հայաստանեայց Եկեղեցին և ժողովուրդը զայն հռչակեցին Սուրբ:

Սուրբ Մերոպ իր մեծ գործով շարունակեց Սուրբ Գրիգոր Լուսաւորչի առաքելութիւնը և զայն իր լրումին հասցուց. «գարդարեց անօրինաբար իմաստն Անեղին», և աստուածային լոյսը տարաւ հայ ժողովուրդի մտքէն և սրտէն ներս: Գրիստոնէութիւնը և հայ ժողովուրդը նոյնացան, Հայաստանեայց Եկեղեցին դարձաւ Հայոց Ազգային Եկեղեցին:

Սուրբ Մերոպ հայ ժողովուրդին զիր ու զիրք տալով, դարձաւ աշխարհի մշակոյթ ստեղծող լուսաւոր ուժերէն մէկը, վասնզի հայ ժողովուրդը իրեն տրուած այդ մեծ շնորհը զիտցաւ արգասաւորել, հարստացնել ու ծաղկեցնել և հասնիլ գրական ստեղծագործութեանց բարձր կատարներու:

Տանձկեց դարերէ ի վեր Սուրբ Մերոպ իր հուժկու ուսերուն վրայ կը կրէ հայ ժողովուրդի մշակոյթը և կը տանի զայն բարձունքէ բարձունք: Հայ ժողովուրդն ալ, տանձկեց դարերէ ի վեր, իր տաղանդաշատ զաւակներու գործերով, բարձունքէ բարձունք կը տանի Սուրբ Մերոպի պայծառ անունը: Իրապէս, Սուրբ Գրքի Թարգմանութեան առաջին տողերէն մինչև մեր օրերու հայերէն ստեղծագործութեան վերջին տողերուն մէջ, Սուրբ Մերոպ Մաշտոցն է որ կ'ապրի ու կը փառաւորուի:

Սուրբ Մերոպի գործով հայ ժողովուրդը իր ինքնութիւնը գտաւ, իր մտքի ու զգացումի կաղապարները ձուլեց և յօրինեց իր ապրելու և ստեղծագործելու ոճը:

Մեր ազգային ամբողջ մշակոյթը իր բոլոր վաւերական արժէքներով՝ գրականութեան, ճարտարապետութեան, զիտութեան և արուեստներու մէջ, սկիզբ կ'առնէ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի և Սուրբ Մերոպ Մաշտոցի տեսիլքներէն: Այդ ողբկան աղբիւրներէն է, որ բուն հայ ժողովուրդը՝ ծնաւ իր հոգիով, իր իմացականութեամբ, իր զգայնութեամբ, իր պատմութեամբ, իր մշակոյթով:

Այդ ինքնաճանաչման և ինքնակերտման ճանապարհին վրայ կազմուեցաւ և դարձնուեցաւ նաև հայուն ազատ ապրելու կամքը: Սուրբ Մերոպն է, որ միշտ զօրացուց բազուկը հայրենեաց պաշտպան հայ հերոսներուն՝ Աւարայրէն մինչև Սարգարապատ:

Մեծ վարդապետը Թաղուած է Օշական՝ Արագածի փէշերուն՝ Հայաստանի նուիրական հողին մէջ:

Մեռած չէ սակայն Օշականի Սուրբը, «Քանգի անմահ է յիւսաակ նօրա» (Իմաստթ. Գ. 1):

Սուրբ Մերոպ այսօր ամենակենդանի հայն է: Ան կ'ապրի մեր վերապրող ու վերածնած ժողովուրդի սրտին մէջ և շրթներուն վրայ, Հայրենի աշխարհի ափերէն մինչև հեռունները հայ Սփիւռքին:

Սուրբ Մերոպ կ'ապրի մանուսանդ ու կը գործէ մեր արդի վերաշինուած հայրենի կուռրին տակ, քաղաքամայր Երևանի Մատենադարանի կամարներուն ներքև, Հայաստանի համալսարանի և դպրութեան բազում հաստատութիւններուն մէջ:



Տանսկեց դարեր առաջ, Սուրբ Մեսրոպ հայ ժողովուրդի հոգիին մեծ յաղթանակը հանդիսացաւ: Իսկ տանսկեց դարեր յետոյ, այսօր, մեր ժողովուրդի, մեր Հայրենիքի ու մշակոյթի գոյութիւնն ու ծաղկումը մեծ յաղթանակներն են մանաւանդ Սուրբ Մեսրոպ Մաշտոցին:

Հայ հաւատքի վէժ Սուրբ Էջմիածնէն և երախտագէտ հայ ժողովուրդի սրտէն՝ յարգանք և փառք և օրհնութիւն սքանչելագործ Սուրբ Մեսրոպի յիշատակին և անոր անմահ գործին:

Յարգանք և փառք և օրհնութիւն նաև հայ ժողովուրդի կեանքին և վերածնունդին, անոր ապրելու կամքին և ստեղծագործ անսպառ ուժերուն:

Թող մեր հայրերու Աստուածը միշտ պայծառ պահէ լուսեղէն դասնեպսակը Սուրբ Մեսրոպին, և միշտ կենդանի, խաղաղ ու ապահով պահպանէ հայ ժողովուրդը և անոր Մայր Երկիրը նուիրական:

Եւ թող Աստուած իր շնորհները նոյն առատութեամբ բաշխէ մեր Ազգին, որպէսզի ան յաղթականօրէն շարունակէ իր առաքելութիւնը այս աշխարհի վրայ՝ միւս ժողովուրդներու կողքին, իր գաւազներուն հանճարով հարստացնելով մշակութային գանձարանը համայն մարդկութեան:

Հայրապետական մեր այս կոնդակով կը հրահանգենք մեր նուիրապետական Աթոռներուն, թեմակալ առաջնորդներուն, ազգային-եկեղեցական իշխանութեանց, վարժարաններու տնօրէնութեանց, հոգաբարձութեանց, հայ մամուլին և հայ մշակոյթի բոլոր հաստատութեանց՝ համազգային հանդիսութեամբ տօնել, պանծացնել սուրբ յիշատակը Մեսրոպ Մաշտոց Վարդապետին, անոր ծննդեան 1600 ամեակի առիթով, Հոկտեմբեր 14ին, Թարգմանիչ Վարդապետներու տօնին:

Հայ ժողովուրդ, միշտ կենդանի և միշտ փառքի մէջ պահէ քու մեծասքանչ մայրենի լեզուդ և զիրդ Մեսրոպեան:

«Ողորմութիւն Աստուծոյ եւ շնորհի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ամենեսին»: Ամէն:

Վ Ա Ջ Գ Է Ն Ա .

Տուաւ կոնդակս ի 25ի Օգոստոսի
1961 Փրկչական ամի,
և ի տուամբիս Հայոց ՌնժԱ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմբ. 413

(ԿՆԻՔ)

ՅԱՅՐԱԿՈՅՆ ՊԱՏՐԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

